1861.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ

505

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՕՍ.-ԴԵՄ. ԲԱՆ. ԿՈՒՍԱԿՑ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ

(1920 թ. ՄԱՅԻՍԻ ԿՕՆՖԵՐԱՆՍԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ)

Երևան
«ՀԱՅԵՐԿՐԻ»
1920 թ.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ

(1920 Թ. ՄԱՅԻՍԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ)

Ֆ 65

Ա Գ/9551

ՀԱՅԿ ԵՎԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ

(1920 թ., մայիսի 28—30 Կոնֆերանսի որոշումները)։

Հրապարակ գալով սույն թուականի յունուարի 18ին մի կոչով, մեր կուսակցութիւնը մի շարք ձախորդ պայմանների շնորհիւ չկարողացաւ կազմակերպական աշխատանքի և կուսակցական գործունէութեան հարկաւոր եռանգը սպառել։ Զատ կողմերից զգացւող և շեշտւող զլխաւոր թերին, որ աչքի էր ընկնում առաջին հերթին, դա մեր կուսակցական ծրագրի բացակայութիւնն էր, ուստի ցանկալի էր համարւում օր առաջ մտածել ծրագրի մշակման և հրատարակման մասին։ Փաստօրէն այդպիսի մի ծրագիր կար

արդէն՝ յանձին 16 տարի առաջ հիմնուած Սոցիալ-Դեմ. Բան. Հայ կազմակերպութեան (Բազում), որի անդամները մեծամասնութիւն էին կազմում նոր կուսակցութեան հիմնադիրների շարքում։ Բայց քաղաքական պայմանները այնքան էին փոխուել, որ համապատասխան ուղղութեամբ հիմնական փոփոխութիւն էին պահանջում նաև գոյութիւն ունեցող ծրագրի գործնական մասի՝ ամենից առաջ քաղաքական և սոցիալական կէտերի ու առաջադրութիւնների նկատմամբ։

Մայիսի 28ին Ալէքսանդրոպոլում գումարուած մեր կուսակցական կոնֆերանսի — որին մասնակցում էին Երևանի, Ալեքսանդրոպոլի և Ղարաքիլիսայի կազմակերպութիւնների ներկայացուցիչները—առաջին հերթական նպատակը հէնց այդ նոր պայմաններին համապատասխանող ծրագրի մշակման մէջ էր կայանում։

Կոնֆերանսի օրակարգը հետևեալն էր.

1) Զեկուցումներ տեղերից.
2) Կուսակցութեան ծրագիրը.
3) Կուսակցութեան տակտիկան.
4) Կազմակերպչական հարցեր և կանոնադրութիւր.
5) Կենտրոնական կոմիտէի ընտրութիւնը։

Տեղերի կուսակցական կազմակերպութիւնների գործունէութեան վերաբերեալ արած զե-

կուսակցությունից երևաց, որ չնայելով իր մատաղ տարիքին, կուսակցությանն յաջողություն է բերել գործունեության շրջանակներում ձեռք բերել հարկաւոր դիրքեր, ազդեցություն և ժողովրդական համակրանք։ Կուսակցության Երևանի կոմիտեն զարկ է տուել առա ձեռագրեր հրապարակային զասախոսություններին։ Նուիրուած ժամանակից հասարակական և պետական կեանքի կոչնչազոյն հարցերին և երևոյթներին։

Կուսակցության ամենաուժեղ կողմակերպությունը Էջմիածնի դպրոցում շնորհիւ այն հանգամանքի, որ երեք տարի առաջ հիմնուած անկախ ուսանողական միութիւն։ սոյն թուականի մարտին իր ամբողջ կազմով մտնում է մեր կուսակցության մէջ։ Էջմիածնի դպրոցի միջոցի գործունեությունը սոսնձնաւոր է մայիսեան դէպքերի ժամանակ։ Մեր ընկերները չանաչել են իրանց հանդուգն։ Մարտի առաջն առնել յաղաքաքական ընդհարումների, որը եղել է սպասելի։

Շնորհիւ այն մեծ պակասը, որ կուսակցությունը չունի դժբախտաբար իր օրգանը, աշխատել է գրաղանալ իր յանձնաւոր քարոզչությունը։ Ինչպես նաև գրական հոդի վը-

ցայ։ Միայն երբեմն — երբեմն. խոշոր անցքերի ու երեւոյթների շուրջը, Երեւանի կոմիտէն բաց է թողել թռուցիկներ (այսպէս օրինակ Ադրբէջանի խորհրդային իշխանութիւն ընդունելու փաստի, Ալեքսանդրոպոլի բոլշեւիկական ապստամբութեան, Հայաստանի սովետական անկախութեան երկրորդ տարեդարձի շուրջը ևն)։ Ցանկութիւն յայտնուեց կոնֆերանսի կողմից, որ մեր կուսակցական կազմակերպութիւնները աշխատեն ամեն կերպ ուժեղացնել կուսակցութեան ֆինանսները և հրատարակել սեփական օրգան։

Կոնֆերանսում վերջնականապէս մշակուեց կուսակցութեան ծրագիրը։ Ծրագրի առաջին կամ տեսական մասը — մարքսիստական թէորիական ըմբռնումները — հիմնուած գերմանական սոցիալ դեմոկրատիայի Էրֆուրտի ծրագրի վրայ — մնաց էապէս անփոփոխ, այնպէս, ինչպէս եղել է Սոց.—Դեմ.—Բան. Հայ կազմակերպութեան ծրագրի մէջ։ Միայն գործնական մասն է՝ ժամանակակից բուրժուական տնտեսակարգի և հասարակակարգի դէմ ուղղուած սոցիալիստական մինիմում պահանջներն ու պոստուլատները, որոնք մի քանի կարեւոր կէտերում պիտի ենթարկուէին հիմնական փոփոխութեան։ Ինչ ասել կուզի, որ ռուս միապետական ինքնակալութեան օրով կազմուած սոցիալիստական ծրագիրները պիտի հիմնական փոփոխութեան ենթարկուէին մեծ յեղափոխու-

թիւնից յետոյ իրենց մինիմումի կամ գործնական պահանջների մէջ։ Այն, ինչ որ առաջ ծրագրային իդէալ էր համարւում ողջ Ռուսիայի պրոլետարական դեմոկրատիայի համար, 1917 թ. փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ, դարձաւ ակնյայտնի իրողութիւն։ Պարզ է, որ պետական կազմի, քաղաքական և քաղաքացիական իրաւունքների և ազատութիւնների, ինչպէս և տնտեսական ու սոցիալական պահանջների հետ կապուած մի շարք ծրագրային հիմնական կէտեր պիտի համապատասխան փոփոխութիւններ կրէին Մեծ Յեղափոխութեան հետևանքով։

Բայց կայ մի այլ կարևոր հանգամանք։ Ցարական բռնակալութիւնը խորտակուելուց յետոյ, հին կայսրութեան փլատակների վրայ, նրա զանազան ծայրերկրներում, կեանքի կոչուեցին մի շարք նոր պետական միաւորներ, քաղաքականապէս վերածնուեցին վաղեմի ճնշուած ժողովուրդները։ Ահա այդ հանգամանքը չէր կարող անուշադրութեան մատնուել մի այնպիսի կուսակցութեան ծրագրի մէջ, որ ծնունդ է առել քաղաքականապէս վերածնուած ժողովրդի իրականութեան ծոցում։ Ուստի բնական է, որ մեր կուսակցութեան ծրագրի մէջ արժանի գնահատումը գտնէր Հայ ժողովրդի պետականօրէն ինքնորոշելու փաստը։ Մեր կու-

սակցութիւնը կանգնած է միացեալ եւ անկախ Հայաստանի պետականութեան տեսակէտի վրայ—ահա նրա ձգտումների առաջին կէտը հայ ժողովրդի քաղաքական բախտի նկատմամբ։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ

Կոնֆերանսում մշակուեց նաև կուսակցութեան տակտիկան։

«Հարկը պահանջած դէպքում 24 ժամուայ ընթացքում կփոխեմ ես իմ տակտիկական դիրքը 24 անգամ»։

Աւգուստ Բեբելի այդ յայտնի խօսքերը սոսկ հեռաօրական չափազանցրած ձեւակերպումն է այն ճշմարիտ մտքի, որ քաղաքական կազմակերպութիւնների կուսակցական տակտիկան պէտք է լինի ճկուն, կենդանի, դիւրաշարժ մի գործելակերպ սոցիալ—քաղաքական հրատապ երեւոյթների և հարցերի շուրջը։ Ամեն մի կուսակցութեան ծրագիրը բղխում է նրա աշխարհահայեցքից, նրա կուսակցութեան սոցիալ—պատմական զոյութեան հիմքերից։ Այդ իմաստով կուսակցութեան ծրագիրը՝ իր հիմնական—տեսական մասով և գործունէութեան տենդենցներով մշտաբժէք է և տեսական այն չափով։

[illegible] ակցութիւնը չի փոխում իր աշխարհայեացքը եւ իդեալական սկզբունքները։ Հասակցութեան տակտիկան, ընդհակառակը, այն զարգացնում է, ակտերի, քայլերի, պրիոմների այն դաժանագոյն ու վերաբերումների [illegible]թունն է, որով արտայայտում է կուսակցութիւնը իր քաղաքական դիրքորոշումը [illegible] հակառակորդների [illegible] այս կամ այն ծրագրի ու հասարակական հասակցութեան տակտիկան բղխում է գործնական դպրոցական պայքարի սկզբունքներից եւ կոչուած է միջավայրի ու մարդկանց [illegible] հարթել յարմարագոյն ուղիներ կուսակցական գաղափարը դիրքորոշելու և ծրագրային [illegible] իրականացնելու համար։ Տակտիկան փոփոխութիւնը [illegible] մարդկանց նորանոր գործնական աշխատակցութիւններ, որոնց [illegible] էլ հանդիպում [illegible] փոփոխուելիս [illegible] կուսակցական ճիշտ տակտիկան [illegible] պիտի հաստատի [illegible] խօսքերը իրենց հեռաւորագոյն [illegible]։

Գանգրատի և մանաւանդ [illegible] Հայ մարդկանց միճակը եղել է և [illegible] մնալ, աւելի քան [illegible] դա ակնյայտնի փաստ

է բոլոր նրանց համար, որոնք զուրկ չեն պատասխանատուության զգացումունքից հայկական կոլեկտիվի առաջ։ Կասկածից դուրս է, որ մի ժողովրդի բացառիկ դրությունը — լինի դա ֆիզիկական վտանգի, պարենաւորման ճգնաժամի կամ սովի ուրուականի և քաղաքական հարուածի իմաստով արտայայտուած՝ միևնոյն է — ամենամեծ չափով և դաւը հետևանքներով անդրադառնում է տեսալ ժողովրդի բանւոր և աշխատաւոր մասսաների — ժամանակակից հասարակության ամենից ընչազուրկ, շահագործւող ու ճնշւող հատուածների վրայ։

Ահա, ի նկատի ունենալով այդ հանգամանքը, Հայաստանի սոցիալ դեմոկրատիան — վերայիշեալ հատուածների շահերի ու ձգտումների ամենից հետևողական և հրդեալ պաշտպանն ու արտայայտիչը — խորապէս ըմբռնելով և գնահատելով տիրող քաղաքական սիտուացիան, գալիս է և իր արդի ժամանակաշրջանի ընդհանուր վարքագծով յայտարարում Հայաստանի բոլոր քաղաքական կուսակցութիւններին համագործակցութիւն ու համերաշխութիւն։

Մեկնելով այդ տեսակէտից, մեր կուսակցութիւնը որոշում է իր տակտիկական հետևեալ վերաբերմունքը։

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեր վերաբերմունքը դէպի կառավարութիւնը բղխում է մեր ծրագրից։ Ամեն մի կառավարութիւն, որ կը ձգտէ ժամանակակից կազմակերպուած դեմոկրատիայի մեր ծրագրին համապատասխանող քաղաքական իդեաներն ու տնտեսա—սոցիալական բարենորոգումները իրականացնել, կարժանանայ մեր կուսակցութեան վստահութեան և աջակցութեան։ Այն միջոցները, որ կը ձեռնարկէ կառավարութիւնը պետականութեան հիմքերը ամրապնդելու համար Հայաստանում, և այն քաղաքականութիւնը, որ կը վարէ նա Հայաստանի պետական անկախութեան հիմքերը փորփորող տարրերի դէմ, —որ կողմից էլ գան և ինչ կուսակցութեան գրօշակի տակ էլ նրանք երևան գան, միևնոյն է— կը գտնէ մեր կուսակցութեան կատարեալ խրախոյսն ու հաւանութիւնը։ Ազատագրելու համար Հայաստանի պետական իշխանութիւնը տիրող կուսակցութեան եղակի և արկածախնդրական խնամակալութիւնից, նրան նեցուկ ու ապաւէն ծառայեցնելու համար պետականօրէն մտածող բոլոր կենդանի ու կենսունակ այժերին և համաժողովրդական բնոյթ տալու համար

նրա հեղինակությանը, Հայաստանի սոցիալ-դեմոկրատիայի մերձավոր խնդիրներից մեկն է լինելու՝ կոալիցիոն մինիստրությանն ակզբունքը իրականացնել Հայաստանում։

Հ. Հ. Ց. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՍԻՆ

Արքսիստական սոցիալ-դեմոկրատիայի և էս—էրական էկլեկտիկ աշխարհայեացքին տարած Հ. Ց. Դաշնակցութեան միջև իդէոլոգիական—ակզբունքային տարբերությունները այնքան խոր են ու խորը և այնքան յոգ ճախ են արտայայտել ու բաղխել անցեալում իրար հետ ու այսուհետև էլ ալիք բաղխեն, որ այստեղ՝ դուռ տակտիկական վերաբերմունքի մշակման մէջ, գրանց մասին խոսք լինել չի կարող։ Բաւական է միայն ասել, որ մենք դիտական սոցիալիզմը կամ պրոլետարիատի գոտակարգային յոտակ ուսմունքը հակադնում ենք Դաշնակցութեան ուշխատաւորական—ազգ բուրժուական մշուշապատ տեսակէտներին։

Ո՞րն է մեր մեր տակտիկական վերաբերմունքը դէպի Դաշնակցութիւնը։ Հ. Ց. Դաշնակցութեան վրայ, որպէս կուսավարական կուսակցութեան, ծանրանում է պետական իշխա-

նութեան վարած քաղաքականութեան ողջ պատասխանատուութիւնը, ուստի դէպի կառավարութիւնը յայտարարած մեր վերաբերմունքը յայտնի չափով անդրադառնում է նաև Դաշնակցութեան վրայ։ Նա կարող է արժանանալ մեր բարոյական աջակցութեանը տմեն անդամ, երբ մեր ժողովրդին ու երկրին, մեր պետութեանն ու անկախութեան կսպառնայ վտանգ արտաքին թէ ներքին ուժերի հարուածներից։

Բայց միւս կողմից մենք պէտք է անհաշտ դիրքարենք՝ 1. Ֆրակցիոնիզմի համ կուսակցապաշտութեան այն վատառողջ աւանդութիւնների դէմ, որոնցից դեռ չի ազատագրուել պետական իշխանութեան գլխին կանգնած կուսակցութիւնը. 2. կուսակցական մենաբտօնութիւնների, խարական և ողանգաւորական քաղաքականութեան դէմ. 3. բիւրոյական խնամակալութեան դէմ, հայ պետական իշխանութեան վրայ. 4. իր սեփական շարքերում նկատուող ֆէոդալիստական արամադրութիւնների դէմ, որոնք մեռցնում են ժողովրդի մէջ իրաւագիտակցի և օրինականութեան գիտակցութիւնը։

3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մէկից աւելի են այն հիմքերը, որոնք կարող էին պայմանաւորել գոյութիւնն ու գործունէութիւնը մի լուրջ բուրժուական կուսակցութեան հայկական իրականութեան մէջ։ Բայց մէկից աւելի են այն պատճառները, թէ ինչու կեանքի չի կոչւում մի այդպիսի կուսակցութիւն.

Քաղաքական դիմագրկութիւնը մի ընդհանուր երևոյթ է մեր բուրժուազիայի և բուրժուական ինտելիգենցիայի համար, և մի ընդհանուր պատճառ մեր ունևոր խաւերի և նրա մտաւորականութեան քաղաքականութեան անկազմակերպ վիճակի։ Իսկ «Հայ Ժողովրդական Կուսակցութեան» հանդէս գալը, կարծես, պիտի ապացուցէր, որ քաղաքական դիմագրկութեան շրջանը անցել է։ Բայց այս կուսակցութիւնը, լինելով բուրժուական իր էութեամբ ու դասանքով, միայն աւանց բուրժուազիայի իր կամ ժողովրդաքաղաքական տարատեսակ ու երերուն, հետադիմական ու անհետևողական դիմագծով այդ կուսակցութիւնը երազում էր միշտ իշխանական բարձերի մասին և այդ նպատակով մղած պայքարը փոխանակ նշանադրած կէտին հասնելու վնասում են կամ իրան և կամ պետութեան։ Ժողովրդական Կուսակցութիւնը, իբրև օպոզի-

ցիա, միայն այն ժամանակ կարող է աշխատանավոր դրությունը, եթէ նա առաջնորդություն ունենայ քաղաքական ճգնաժամի վայրկեանին չափաւորելու իր իշխանատենչ հակումները։

Ցեղադայում, տնտեսական ճիւղերի յեղաշրջման և արդիւնաբերական կեանքի զարգացման հետ միասին, պիտի աւելի ու աւելի խորանայ վիճը և ուժեղանայ հակամարտութիւնը Հայաստանի սոցիալ դեմոկրատիայի և կապիտալիստական բուրժուազիայի քաղաքական կառամակերպութիւնների միջև։

4. ՀԱՅ ՌԱՄԿԱՎԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր առմամբ Ռամկավար կուսակցութիւնը իր քաղաքական դաւանանքով նոյնն է արևմտահայ կեանքում, ինչ ժողովրդական կուսակցութիւնն է ռուսահայ կեանքում։ Անկախ իր քաղաքական ձգտումներից, Ռամկավար Կուսակցութիւնն Հայաստանի Հանրապետութեան մէջ գործող ճիւղը մի արդար ձգտում ևս ունի՝ պաշտպանել արևմտահայ հաւատի հաւաքական շահերը և արտայայտել նրա ձգտումները այնպէս, որ հարկ կայ առանձ-

ձնա՝ էս այդ անելու։ Այդ կարգի Հանքերը կարող են գտնել մեր պաշտպանությունը՝ ամեն անգամ քննության առնելով կոնկրետ դեպքերը։

Ն ՀԱՅ ՍՈՑ.-ՏԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ էս էրական կազմակերպությունը ռուսական օրինաստացիայի պաշտոնական ներկայացուցչությունն է մեր պետական կեանքում. նա համաուս կուսակցության հայկական ֆիլիալն է մերՀանրապետության սահմաններում։

Իբրեւ այդպիսին, հայ էսէրները հաստատամտությամբ պահպանում են իրանց ծրագրի ֆեդերատիվ տեսակէտը՝ նոբից ռուս ժողովրդի հետ քաղաքականապէս բախտակից դարձնելուհամարհայժողովրդին։Նրանք դէմեն մեր ժողովրդիքաղաքական ինքնուրոյնության,նրա պետական սուվերէն գոյության։ Չհամարելով իրանց անկախ Հայաստանի քաղաքացիները, հայ էսէրները խրացրել և վայելում են լեկալանքաղաքացիների ամենաբարձր իրաւունքները —անդամակցությունը և աշխատանքը անկախ Հայաստանի պարլամենտում։ Միայն քաղաքականապէս անկազմակերպ. զորշ դանդուածների

միջավայրում կարող են արտայայտություն գտնել և ծայր տալ նման վատառողջ երևույթները։

Մեր կուսակցությունը պիտի մղի ամենաանխնայ պայքարը այդ անօմալիայի դեմ. Հայաստանում հակապետական է նա, ով չի ընդունում հայ ժողովրդի պետական ինքնորոշումը՝ անկախության սուվերէն իրավունքների լմաստով։

6. ՀԱՅ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՄԵՍԻՆ

Հայ բոլշևիկները շարունակում են անհաշտ մնալ հայ պետականությանը։ Նրանք Իուսաստանի անձնուէր գոքծակներն են և իբրև այդպիսիք պիտի արժանանան մեր բուռն բացասական քննադատությանն։ Հաշտվելով մեր պետականության, այսինքն ընդունելով մեր ժողովրդի քաղաքական անկախությունը, նրանք կարող են հանդուրժելի հումանիզմ մեզ համար այն չափով, որ չափով իրանց պայքարին կուռն գաղափարական իմաստ, իսկ գործելակերպին դեմոկրատական — կուլտուրական բնույթ։ Նրանց վարած քաղաքացիական կռիվը Հայաստանի սահմաններում համարում ենք դատապարտելի և ժողովրդասպան։ Նրանց ձգտու-

մը՝ հայկական գաւառները (Ղարաբաղ և այլն) ռուսերեն ելնելով էջմիածին, համարում ենք դաւճանութիւն մեր ժողովրդի շահերի հանդէպ։ Ներառնք գիտաւորեալ աշխատանքը Ռուսաստանում, որ տրւում է մեր ամբողջ համակարգը հանրապետութեան վերկը գցելու գնով, համարում ենք մի ան գործ, որ վերջին հաշուով նպաստում է մեր ժողովրդի կազմալուծմանն։

7. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեր կուսակցութեան վերաբերմունքը «Խորհրդային իշխանութիւն»-ը բացարձակապէս բացասական է։ Եւ իրաւ, ոչ միայն այն պատճառով, որ նա միանգամայն խորթ և օտարօտի մի վարչաձև է հայկական պայմանների համար, այլև պատ սկզբունքային տեսակէտից։

«Պրոլետարիատի դիկտատուրայի» և «բանւորա—գիւղացիական կառավարութեան» անուանատակ փաստօրէն իշխում է այսօր անձնական ռեժիմը և գրուպպայական բռնապետութիւնը։ «Խորհրդային իշխանութիւն» տարածը, այնպէս, ինչպէս նա կայ այսօր հրապարակով,— դա նա-

հատկանշն է նշանակում դեմոկրատիզմի բոլոր տարրական սկզբունքների։ Մինչդեռ պրոլետարիատի դասակարգային—հասարակական իդեալը պէտք է և կարող է իրականանալ միայն դեմոկրատիզմի միջոցով,—դեմոկրատիզմի միջոցով դէպի սոցիալիզմ։ Խորհրդային իշխանութեան սահմաններում անգամ միապետական ռեժիմին անծանօթ դրացնական խստութիւններով խեղդւում ու բռնաբարւում է ազատ խօսքն ու միտքը, ճնշւում ու հալածւում ամեն բան, ինչ գուր չի գալիս կոմիսարական բռնակալութեան քմքին։ Մինչդեռ պրոլետարիատը այն դասակարգն է ժամանակակից հասարակութեան մէջ, որը նւաճելով ազատութիւն իր համար, միաժամանակ ազատութիւն է շնորհում նաև անխտիր բոլորին։ Այո, անգամ իր հակառակորդներին։ Կենսունակ դասակարգը, որը իր իսկ հասարակական գոյութեամբ, ապահովել է ընդմիշտ յաղթանակը ապագայում, կարիք չունի քաշւելու կամ երկիւղ կրելու հակապրոլետարական տարրերի գաղափարային քարոզչութիւնից։

Սակայն եթէ մեր վերաբերմունքը ժխտական է դէպի «Խորհրդային իշխանութիւնը որպէս վարչաձև, դա դեռ չի նշանակում, որ մեր պետութիւնը պիտի ճշնամաբար կամ բացասաբէն վերաբերւի դէպի խորհրդային Ռուսաստան

նը. իբրև արտաքին ոյժ։ Հայ ժողովուրդը՝ տնօրինելով իր քաղաքական բաղդը ինքնուրոյն եղանակ, պատրաստ է քաղաքական համաձայնութեամբ և տնտեսա-տնտեսական պայմանագրերով բարեկամական յարաբերութիւններ պահպանել նախկին Ռուսիոյ նոր իշխանութեան հետ, ով ուզում է, թող լինի վերջինս։ Մեզ կողմից Հայ Հանրապետական կառավարութիւնը պիտի օժտուած լինի սեփական արժանապատուութեան գիտակցութեամբ՝ պետութեան բոլոր սուվերէն իրաւունքները գնահատելու և պաշտպանելու այն փոխ-յարաբերութիւնների ընթացքում, որ նա պիտի ունենայ խորհրդային Ռուսաստանի հետ։

8. ՀԱՐԵՒԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանը լինելով մշտական ոտնձգութիւնների և յարձակումների ենթակայ, իր փոքրաթիւ բանակով ինքնապաշտպանական ճակատ բռնելով բազմաթիւ կէտերում, ամենամեծ կարիքն ու շահագրգռութիւն ունի հաշտ ու համերաշխ, խաղաղ ու բարի դրացիական յարաբերութեամբ ապրելու իր հեռաւոր սահմանակից երկրների հետ։

Ա. Թիւրքիայի հետ. Թիւրքիայի հետ հաշտ

ապրելու հարցը կախված է բացառապէս իրենից—Թիւրքիայից։ Չունենալով ոչ մի նուաճողական ձգտում և անարգար պահանջ օտարի դէմ, հայ ժողովուրդը իրաւունք ունի սպասելու, որ այդ օտարը—դարերի թշնամին—մի անգամ ընդ միշտ վերջ տայ իր տիրելու, ճնշելու և յափշտակելու անփառունակ տրադիցիաներին և հաշտուէ այն մտքի հետ, որ հայ ինքնորոշուած ժողովուրդը իր իրաւազօր և հաւասարազօր հարևանն է, և որպէս այդպիսին, թոյլ չի տայ նա ոչ մի դէպքում իր անկապտելի սեփականութիւնը յափշտակելու և իր պետական սուվերէն իրաւունքները խախտելու։

Բ. Վրաստանի հետ. Վրաստանն ու Հայաստանը շահագրգռուած են բատ ամենայնի ընական դաշնակիցներ և կուլտուրական լծակիցներ լինելու Անդրկովկասում։ Երկու գեմոկրատիկ հանրապետութիւնները պէտք է որոնեն առիթներ աւելի ու աւելի մտերմական կապ ու յարաբերութիւն ստեղծելու երկու երկրների միջև, թէ տնտեսապէս, թէ քաղաքական ու պետական շահերի տեսակէտից, թէ ազգաբնակչութեան երկուսաթը աւանդական տեսակներով—շատ են և բազմակողմանի այն հրաշխիները, որոնք կարող են հայ-վրացական բարեհամական յարաբերութիւնների հիմքերը ամրա-

ղնդել, եւ հայկական կառավարութիւնը պէտք այդ ուղղութեամբ իրանից կախուած բոլոր միջոցները գործադրէ երկու ժողովուրդների մերձեցման ճանապարհը հարթելու համար։

Դ. Ադրբէյջանի հետ. Այն չափով, որով խորհրդային Ադրբէյջանը կը վարէ խորհրդային Ռուսաստանի ծայրերկրին վերապահուած քաղաքականութիւնը, այդ չափով վաստակէն բուն Ռուսաստանն է հանդէս գալիս, որպէս պատասխանատու վարիչը այդ քաղաքականութեան։ Իսկ խորհրդային Ռուսաստանը պէտք է խաղաղ միջոցներով և արդարութեան սկզբունքով նպաստէ յաջող լուծմանը այն տերրիտորիական վէճերի, որոնք տակաւին գոյութիւն ունեն Հայաստանի հանրապետութեան և Ադրբէյջանի միջև։ Միայն այդ եղանակով է հնարաւոր երկու դարաւոր հարևանների խաղաղ համակեցութեան ապահովութիւնը։ Թուում է ներելի էր և բնական սպասել, որ խորհրդային անուանուող Ադրբէյջանի նոր քաղաքագէտները հիմնապէս տարբերուէին մուսուլմանական կառավարութեան յատուկ նեանդերական տենդենցներից և թշնամական գործողութիւններից, ուղղուած Հայաստանի դէմ։ Միւս կողմից, սակայն, հազիւ հնարաւոր լինի անկեղծ ու տևական խաղաղութիւն երկու սահմանակից երկրների միջև, բանի հայ ազգաբնակութիւնը Ադրբէյ-

ջանում կը շարունակի մնալ բացառիկ պայմանների, սարսափների ու հալածանքների ենթակայ։

Դ. Պարսկաստանի հետ. Ահա մի սահմանակից երկիր, որ բացի բարեկամական յարաբերութիւններից, ոչինչ վատ ու թշնամական վերաբերմունք չի ունեցել դէպի Հայաստանը և թէ իր ներսում՝ ապաստան գտած հայկական տարրը։ Հայաստան ու Պարսկաստան պիտի շարունակեն նոյն ուղղութեամբ ամենալաւ յարաբերութիւնները պահպանել իրար հետ, կընդունելով տնտեսա-առևտրական իրար նպաստաւոր պայմանագրեր։

ՄԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ՕՐԻՆՄՏԵՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ

Մեր կուսակցութեան վերաբերմունքը դէպի առհասարակ արևմտեան տիրական ոյժերը յարաբերական ու պայմանական է։ Մեր օրիենտացիան հայկական է այն իմաստով, որ հայ դեմոկրատիան պէտք է կրթնէ ինքը իր ոյժերի վրայ, ձգտէ իր առաջադրած նպատակներին հասնել իր միջոցով, իր քաղաքականութիւնը վարել իր երկրի ու պետութեան շահերի, իր

ժողովրդի բարեկեցութեան տեսակէտներով։ Սակայն եթէ երբ և իցէ խօսք կարող է լինել օտար կողմերի միջև ընտրութիւն անելու հարցի մասին, — որ շատ բնական է մի յետամնաց երկրի, աղքատ ժողովրդի, նորաստեղծ պետութեան կեանքի համար, — ապա մեր խորին համոզմունքով հայ դեմոկրատիայի համար կարող է և պէտք է միայն մի ընտրութիւն լինի — յօգուտ արևմուտքի և ոչ արևելքի։

Արևելքում գործող երկու զինակցած ոյժերը — ռուսական բոլշևիզմը և թիւրքական պանիսլամիզմը — ասիական յետամնաց երկրների առանձնայատկութիւններից բղխած հակակուլտուրական երևոյթներ են, որոնք, իրրև այդպիսիք, տնտեսական զարգացման շահերի տեսակէտից հաղար անգամ ըէակցիօնէր, ստորադաս և ստորադասելի են եւրոպական և ամերիկական իմպերիալիզմի հանդէպ, որը, որպէս կապիտալիստական կուլտուրայի նորագոյն և վերջին էտապը, իր բոլոր բացասականներով հանդերձ այնուամենայնիւ արժէքաստեղծ, կուլտուրական և տնտեսապէս առաջադէմ երևոյթ է։

Արևմտեան իմպերիալիզմի թիկունքում գործում է արևմտեան կապմակերպված դեմոկրատիան։ Հայ դեմոկրատիայի համար ընդունելի

են կուլ միայն այն ուղիները, այն մեթոդներն ու զէնքերը, որոնցով ընթանում է արևմտեան աւագադոյն-փորձառու դեմոկրատիան և իր պայքարը վարում իմպերիալիզմի դէմ։ Մեր, որպէս կուսակցութեան, օրիենտացիան ուղղած է դէպի արևմուտքի հարազատ-պրոլետարական ինտերնացիոնալը. մենք ժխտում ենք արևելեան ոյժերի այդ հողի վրայ աւած բոլոր կեղծ, շինծու և խարդախ փորձերը։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄՍԱԻՆ

Կոնֆերանսը որոշեց և պարտադրեց կուսակցական կազմակերպութիւններին ամեն ջանք թափել և իրականացնել կուսակցական օրգան ունենալու սուր պահանջը, անշուշտ զգալով հանդերձ կուսակցութեան նիւթական այն սուղ միջոցները, որոնք, դժբախտաբար, անհնար պիտի դարձնէին մօտիկ ապագայում մեծ ծախսերի հետ կապուած պարբերական հրատարակելու։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Կոնֆերանսը ընտրեց հինգ հոգուց և երկու անձնափոխանորդներից բաղկացած մի կենտրոնական կոմիտէ, նիստը Երևանում, որը պիտի ղեկավարէ կուսակցական գործերը և աշխատէ իրականացնել կոնֆերանսի որոշումները։



(064.)

A I 9551

ԼՈՍՍ Է ՏՍՍԵԼ՝

ՀԱՑԱՍՏ. ՄՕՑ.-ԳԵՄ. ԲԱՆ. ԿՈՒՄ.

ԾՐԱԳԻՐԸ, ԳԻՆԸ . . . . . 25 ք.